ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԱՈՒԴԻՏ

Աուդիտ կրթական ծրագրի մագիստրոսները կտիրապետեն աուդիտին առնչվող միջազգային չափանիշներին համապատասխան համակողմանի գործնական և տեսական գիտելիքների, հմտությունների և կարողությունների:

Ծրագրի տևողությունը
1.5 տարի

Դասապրոցեսը
շաբաթական 3 անգամ
18:00-ից հետո

Ուսման վճարը (տարեկան)
700.000 ՀՀ դրամ

Որակավորում
տնտեսագիտության մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՑԱՆԿ

առարկայացանկը մշակվել է հաշվի առնելով միջազգային առաջատար բուհերի լավագույն փորձը

առաջին կիսամյակ

Մոդուլ 1
1.Աուդիտի արդի հիմնախնդիրներ
2.Ֆինանսական վերլուծության հիմնախնդիրներ

Մոդուլ 2
1.Ներքին աուդիտի հիմնահարցեր
2.Կառավարչական հաշվառման հիմնախնդիրներ

Մոդուլ 3
1.Կառավարչական ռիսկերի գնահատում
2.Կառավարչական որոշումների ընդունում

Մոդուլ 4
1.Համակարգային վերլուծություն
2.Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ

երկրորդ կիսամյակ

Մոդուլ 5
1. Բանկային աուդիտի հիմնախնդիրներ
2. Հաշվապահական փորձաքննության հիմնախնդիրներ

Մոդուլ 6
1. Ներքին վերահսկողության միջազգային համակարգեր
2. Աուդիտի միջազգային ստանդարտներ Գիտամանկավարժական փորձառություն

Մոդուլ 7
1. Կառավարչական վերլուծության հիմնախնդիրներ
2. Հանրային հատվածի կազմակերպությունների վերահսկողություն

Մոդուլ 8
1. Փորձագիտություն և ակտիվների գնահատում
2. Հաշվապահական ռիսկերի գնահատման հիմնախնդիրներ

երրորդ կիսամյակ

Մագիստրոսական թեզի պաշտպանություն

Գիտահետազոտական փորձառություն հանրային և մասնավոր հատվածի կազմակերպություններում (տևողությունը՝ 10 շաբաթ)

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Լիանա Հայկազի Գրիգորյան

Կրթական ծրագրի ղեկավար
LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ, ՀՊՏՀ-ում գործող 014 մասնագիտական խորհրդի անդամ:

Կարեն Պարթևի Սահակյան

որակավորված ներքին աուդիտոր, HSBC Հայաստան բանկ ներքին աուդիտոր, SKS Consulting CJSC հիմնադիր տնօրեն, Հայաստանի ներքին աուդիտորների ինստիտուտի խորհրդի անդամ

Վահան Սևակի Բաբայան

ՀՊՏՀ-ի «Կառավարչական հաշվառում և աուդիտի» ամբիոնի դոցենտ, տ.գ.թ: 2018 թվականից իրականացնում է «Հայաստանի ֆոնդային բորսա» և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ վերստուգողի պարտականությունները: Ֆինանսական ոլոտում ունի ավելի քան 28 տարվա աշխատանքային փորձ, մասնավորապես ՀՀ ԿԲ-ում, այդ թվում իրականացրել է Բանկերի տեսչական վերահսկողության վարչության պետի գործառույթները: Տարբեր ժամանակահատվածներում զբաղեցրել է նաև «ԷԿԼՕՖ ՈՒՎԿ» ՍՊԸ-ի, «Ջի ընդ էյ» ՈՒՎԿ ՍՊԸ-ում, «Կամուրջ» ՈՒՎԿ» ՓԲԸ-ում, Պրոմեթեյ Բանկ ՍՊԸ-ում ղեկավարի պաշտոնները: 1998 թ.-ից զբաղվում է նաև դասախոսական գործունեությամբ. 2010 թվականից դասավանդում է ՀՊՏՀ-ում: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ բանկերի միության կողմից 2021թ. տրված հավաստագրի (3 սերտիֆիկատ) հանդիսանում է որակավորված աուդիտոր, ինչպես նաև 15 գիտական հոդվածի, 1 մենագրության, 3 ուսումնական ձեռնարկի հեղինակ, որոնցից մեկը՝ համահեղինակությամբ:

Աննա Աշոտի Բայադյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ: Շարունակական մասնակցություն է ունենում մասնագիտական որակավորման բարձրացման տարբեր դասընթացների: Համահեղինակ է չորս ուսումնական ձեռնարկների: 2016-2017թթ. աշխատել է Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում որպես գիտաշխատող: 2013 թվականից մինչ հիմա «Կառավարչական հաշվառում և աուդիտ» ամբիոնի դոցենտ:

Նարինե Միրզոյան

տ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, ՀՊՏՀ Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ»:

Սոնա Ծառուկի Ղազարյան

տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի տեղակալ , ՀՊՏՀ Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ

Գևորգ Ալբերտի Կարապետյան

որակավորված հաշվապահ, Հայաստանի ֆրանսիական համալսարան հիմնադրամ դասախոս, տնտեսագետ իրավախորհրդատու հետևյալ կառույցներում՝ Դերժավա, ԶիգԶագ, ՍլավՄեդ բժշկական կենտրոնի, Հարկ վճարողի փաստաբանական գրասենյակ:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Արմեն Գևորգի Ճուղուրյան

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի պրոֆեսոր,
Երևանի Հյուսիսային համալսարանի Կառավարման ամբիոնի վարիչ

Կարեն Արշակի Առաքելյան

Հեղինակ է 65 գիտական և գիտամեթոդական հրապարակումների, որից 29 գիտական հոդված, 1 մենագրություն, 18 ուսումնական ձեռնարկ, 17 առարկայական ու կրթական ծրագիր և մեթոդական ցուցում:

Գյուլլո Գաբրիելի Արաբյան

տնտեսագիտության թեկնածու, Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս,
«Երիտասարդական նախաձեռնություններ» հիմնադրամ- գլխավոր հաշվապահ:

Արտակ Գրիգորի Բաղդասարյան

տ.գ.թ., ՀՀ ԿԲ ռիսկերի կառավարման վարչության գործառնական ռիսկերի կառավարման բաժնի պետ

ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

KPMG

MAP COMPANY

GrantThornton

Vallex GROUP

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտներն աշխատաշուկայում կարող են զբաղեցնել

- աուդիտորական ընկերություններում աուդիտի ղեկավար և/կամ անդամ,
- ներքին աուդիտի ղեկավարի կամ անդամի աշխատատեղը,
- բաժնետիրական ընկերություններում վերստուգող և/կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ կամ անդամ, բաց բաժնետիրական ընկերություններում Աուդիտի կոմիտեի անդամ,
- փորձագետ հաշվապահ,
- հաշվապահ-աուդիտոր:

Ողջույն, ես Թամարն եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ Հաշվապահական հաշվառում և Աուդիտ ֆակուլտետի բակալավրիատը, այնուհետ նաև Աուդիտ մասնագիտության մագիստրատուրան:

Ուսումնառության տարիներին ստացած գիտելիքներս այնքան հիմնավոր և բազմակողմանի էին, որ առաջին իսկ աշխատավայր ընդունվելիս անմիջապես կարողացա ընկղմվել և հաջողություններ ունենալ գործնական աշխարհում: **Այժմ աշխատում եմ ՍարՎիա Թեք ընկերությունում**, **որպես գլխավոր հաշվապահ**: Գիտելիքը դուռ է դեպի բոլոր բարձունքները, երբեք մի թերագնահատեք այն և ամուր պահեք ձեր ձեռքերում:

Ես Վարդուհի Միրզաբեկյանն եմ, ACCA **անդամ:**

Deloitte **աուդիտորական կազմակերպության Լյուքսեմբուրգյան գրասենյակի** Private Equity and Real Estate **բաժնի ավագ աուդիտոր**: ՀՊՏՀ Աուդիտ մագիստրոսական ծրագրից ստացած գիտելիքներն ուղեցույց դարձան ինձ համար՝ մասնագիտական նպատակներս հասկանալու և դեպի դրանց առաջնորդվելու ճանապարհին:

Ես Գրիգորյան Ռուզաննան եմ:

Grant Thornton **ընկերության Լյուքսեմբուրգի գրասենյակի** IFRS and consolidation **բաժնի ավագ աուդիտոր**(3): Աշխատել եմ Inecobank CJSC-ում որպես ավագ ներքին աուդիտոր և Grant Thornton Հայաստան ընկերությունում որպես ավագ աուդիտոր:

2016թ.-ին ավարտել եմ Աուդիտ մասնագիտության մագիստրատուրան ՀՊՏՀ-ում: Այստեղ ստացած գիտելիքների և հենց համալսարանի կողմից ուղարկված փորձառության շնորհիվ էլ դարձա Grant Totnton Հայաստան թիմի անդամ, որից էլ սկսվեց իմ մասնագիտական վերելքների ուղին:

Ողջույն, ես Գայանե Մարկոսյանն եմ:

Այժմ աշխատում եմ ՀՀ ՊԵԿ Հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության կամերալ ուսումնասիրությունների թիվ 4 բաժնում, որպես գլխավոր հարկային տեսուչ: Ուսումնառության տարիներին ոչ միայն հարստացրել ենք մեր գիտելիքները, ձևավորվել որպես մրցունակ մասնագետներ, այլ նաև դասախոսների հետ շփումը մեզ օգնել է դառնալ ճիշտ մարդ և քաղաքացի:

Համալսարանում անցկացրած յուրաքանչյուր օրն ունեցել է իր պատմությունը, շնորհակալ եմ ՀՊՏՀ-ին անմոռանալի ուսումնառության տարիների համար:

Ողջույն, ես Գոռ Քոչարյանն եմ:

Աշխատում եմ ՀՀ ֆինանսների նախարարության հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչությունում, որպես ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկման և աուդիտի կարգավորման բաժնի պետ:

Մասնագիտական հաջողությունները հնարավոր են դառնում միայն կրթությամբ և գիտելիքներով, իսկ ՀՊՏՀ Աուդիտ մագիստրոսական ծրագիրը ինձ հնարավորություն տվեց ձեռք բերել գիտելիքների հարուստ պաշար:

Ողջույն, ես Մուշեղ Խորենյանն եմ:

Այժմ աշխատում եմ Հայկական ծրագրեր ՍՊԸ-ում, ՓՄՁ Հաշվապահական և առևտրային համակարգերի բաժնում, որպես ծրագրավորող ինժեներ: Հենց մագիստրատուրայիում ստացած գիտելիքներն ու հմտություններն են այժմ օգնում ինձ հասնել նպատակներիս: